ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 6-ին, Ս. Աստվածածնի տոնի նախօրեին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի գլխավորած Հայ կանանց միջազգային միության անդամներին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՀՀ Սփյուռքի նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միության նպատակը եւ գործունեությունը՝ ի զորացումն ազգային արժեքների, դրանում մեծապես կարեւորելով եկեղեցի-պետություն, եկեղեցի-հասարակություն, եկեղեցի-ընտանիք հարաբերությունների ամրապնդումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց միության անդամներին եւ շնորհավորեց նրանց առաջիկա տոնի առիթով՝ մաղթելով, որ հայ կինն իր լուսավոր կերպարով ու հոգու ջերմությամբ ամենուրեք գեղեցկացնի հայ կյանքը: «Փառապանծ կերպար է կերտել հայ կինը պատմության մեջ իր արիությամբ, նվիրումով եւ հավատարմությամբ ազգային-հոգեւոր արժեքներին: Ուրախ ենք, որ այսօր եւս նույն դերակատարությունը փառքով ու պատվով տանում է հայ կինը թե՛ Հայրենիքում եւ թե՛ Սփյուռքում», - նշեց Նորին Սրբությունը:

Անդրադառնալով Ավետման եւ Մայրության տոների խորհրդին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ դրանք արտահայտությունն են այն ջերմ զգացումների եւ գիտակցության, որ հայ մարդն ունի հանդեպ հայ կինը, նրա կարեւոր առաքելությանը ազգային կյանքում:

Նորին Սրբությունը խոսեց նաեւ եկեղեցի-ընտանիք կարեւոր կապի մասին՝ նշելով, որ Եկեղեցու, հոգեւոր արժեքների հանդեպ ընտանիքի կնոջ եւ մոր կեցվածքով են մեծապես պայմանավորվում հասարակության մեջ բարեփոխումները դեպի բարին, աստվածօրհնյալ եւ աստվածահաճո կյանքը:

Միության անդամներն իրենց հերթին շեշտեցին Եկեղեցու կարեւոր դերակատարությունը հայ ընտանիքի ամրության գործում, պատրաստակամություն հայտնեցին զորակցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տարբեր ծրագրերում:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց միության անդամների հարցերին՝ լուսաբանություններ տվեց հասարկությանը հուզող տարբեր խնդիրների առնչությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ